# ՏԵՂԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Համայնք՝ Սիսիան**
**Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն**




**Դեկտեմբեր 2024թ**

## Նախաբան

Հարգելի գործընկերներ,

Սիսիանի համայնքապետարանն իր տեղական սոցիալական ծրագրով ուրվագծում է համայնքում որակյալ և հասանելի սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացը: Համայնքի տեղական սոցիալական ծրագրի նորացված և լավարկված տարբերակը մշակելու նպատակով համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 5-ի թիվ 675-Ա որոշմամբ ձևավորվել է սոցիալական ծառայությունների բարելավման, մասնակցային սոցիալական ծառայությունների ներդրման հանձնաժողովը, որի աշխատանքի արդյունքում էլ կազմվել է Սիսիան համայնքի տեղական սոցիալան ծրագրի մշակված տարբերակը: Ծրագրի կազմման համար հանձնաժողովի կողմից կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, հավաքագրվել են բավարար չափով վիճակագրական տվյալներ և վեր են հանվել համայնքի սոցիալական հիմնական կարիքներն ու առաջնահերթությունները: Գնահատված կարիքների հիման վրա կազմվել են ծրագրերի անձնագրերը, որոնք առաջիկայում պետք է կյանքի կոչվեն և ձևավորեն համայնքում տարբեր թիրախային խմբերին ուղղված սոցիալական ծառայությունների ներդրման և մատուցման մշակույթը:

Հաջողությո՛ւն բոլորիս համայնքի տեղական սոցիալական ծրագրի  իրականացման կարևոր գործում:

## Բովանդակություն

1. ՆԱԽԱԲԱՆ
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ
3. ՏԵՂԱԿԱՆ(ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ(ՀԱԿԻՐՃ)
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ
6. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ
8. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
9. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
10. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ
11. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ
12. ՀՍԾ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ
13. ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ

13.1 Ծրագիր 1 անձնագիր
13.1.1 Ֆինանսավորման սխեմա
13.1.2 Մոնիթորինգի պլան
13.2 Ծրագիր 2 անձնագիր
13.2.1 Ֆինանսավորման սխեմա
13.2.2 Մոնիթորինգի պլան
13.3 Ծրագիր 3 անձնագիր
13.3.1 Ֆինանսավորման սխեմա
13.3.2 Մոնիթորինգի պլան

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024-2027 թթ տեղական /համայնքային/ սոցիալական ծրագրի նպատակն է սահմանել համայնքի զարգացման տեսլականը, նորարար մոտեցումներով և գաղափարներով ընդգծել դրանց հասնելու հստակ մեթոդներն ու ճանապարհները: Համայնքի զարգացման տեսլականի հիմքում բնակչի կյանքի որակի բարելավումն է, անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու ապահովումը: Համայնքային խնդիրներին պետք է տրվեն իրատեսական լուծումներ՝ յուրաքանչյուրի համար ստեղծելով հավասար պայմաններ և հնարավորություններ, բարենպաստ և արդար միջավայր:

Համայնքի գերխնդիրն է ունենալ հարուստ ենթակառուցվածքներով, տնտեսապես ուժեղ և անվտանգ համայնք՝ նպաստելով բնաչության բարեկեցության շարունակական ավելացմանը: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել առկա ռեսուրսները, հնարավորությունները, զարգացման հեռանկարները, առանձնահատկությունները, հետպատերազմական իրողությունները, մարտահրավերները, ինչպես նաև պետական քաղաքականությունը: Ծրագրում նախանշված են հստակ գործողություններ, երկարաժամկետ և կարճաժամկետ ծրարգեր, որոնք նպատակաուղղված են համայնքի տնտեսական առաջընթացին, ենթակառուցվածքների զարգացմանը, սոցիալական վիճակի բարելավմանը, համայնքային տարբեր ոլորտների առաջխաղացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Բոլոր ջանքերը պետք է ուղղվեն համայնքի համաչափ զարգացմանը, բնակավայրերի՝ կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացմանը: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքում ակտիվ գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները:

## ՏԵՂԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Սիսիան համայնքի տեղական (համայնքային) սոցիալական ծրագիրը մշակվել է համայնքում ձևավորված Սոցիալական հանձնաժողովի (ՍՀ) կողմից՝ հաշվի առնելով համայնքի սոցիալական խնդիրների առաջնահերթությունները:

Սոցիալական խնդիրների առաջնահերթությունները սահմանելիս՝ ՍՀ-ի անդամները ուսումնասիրել են Սիսիան համայնքի 2023-2027թթ 5-ամյա զարգացման ծրագիրը, «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում Վիննեթ Գորիս հիմնադրամի կողմից Սյունիքի մարզի համայնքներում իրականացված սոցիալական ծառայությունների իրավիճակային հետազատության արդյունքները, ինչպես նաև տեղական ՀԿ-ների կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի արդյունքում բացահայտված ամենաթարմ տվյալներն ու տարբեր շահառու խմբերի առաջնային կարիքները՝ կապված Սիսիան խոշորացված համայնքում սոցիալական ծառայությունների սակավության և/կամ մատչելիության հետ:

Համայնքի տեղական սոցիալական ծրագիրը ներկայացվել է Սիսիան խոշորացված համայնքի ՏԻՄ, ՔՀԿ, սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներին, համայնքի բնակիչներին՝ հանրային քննարկման միջոցով:

Հանրային քննարկման արդյունքում հավաքագրված առաջարկությունների և/կամ դիտարկումների հիման վրա կկատարվեն անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ:

Այնուհետև, Սիսիան համայնքի տեղական սոցիալական ծրագիրը կներկայացվի Սիսիան համայնքի ավագանու հաստատմանը և կներառվի համայնքի 2023-2027թթ 5-ամյա զարգացման պլանի մեջ կամ կհաստատվի որպես առանձին փաստաթուղթ:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքը կազմավորվել է Սիսիանի տարածաշրջանի 36 համայնքների միավորման արդյունքում: Տարածքը կազմում է 196464 հա: Բնակչության թիվը առ 01.01.2024թ. կազմում է 31810 մարդ: Բնակչության գրեթե կեսը բնակվում է Սիսիան քաղաքում, մյուս կեսը՝ տեղաբաշխված է 34 գյուղական բնակավայրերում և ՀՀ-ի ամենափոքր քաղաք հանդիսացող՝ Դաստակերտում:

Համայնքի կենտրոնը մայրաքաղաքից գտնվում է 210 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոն Կապանից՝ 102 կմ հեռավորության վրա: Համայնքի կենտրոնից վերջինիս բնակավայրերից ամենամեծ հեռավորության վրա գտնվում են Շենաթաղ, Գորայք և Լոր բնակավայրերը, համապատասխանաբար՝ 35, 30 և 30 կմ հեռավորությամբ:

Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը. գերակշիռ ծավալը բաժին է ընկնում անասնապահությանը, հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի աճեցմանը: Բնակչության շուրջ 80%-ն զբաղվում է գյուղատնտեսությամբ:

Արտադրության ճյուղերից զարգացած է էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ փոքր ՀԷԿ-երի միջոցով, քարի արտադրությունն ու վերամշակումը, կաթի և կաթնամթերքի արտադրությունը, հացի և հացաբուլկեղենի, խմորեղենի արտադրությունը, զովացուցիչ ըմպելիքների և պահածոների արտադրությունը: Առկա է նաև հանքային ջրերի գործարան: Ծառայությունների ոլորտում գործունեություն են ծավալում հետևյալ ուղղությունները. հյուրանոցային և հյուրատնային, վճարովի փաստաբանական, նոտարական և թարգմանչական, հաշվապահական, զբոսաշրջային և սպասարկման ծառայություններ:

Համայնքում կլիման բնութագրվում է երկարատև ձմեռներով, զով գարուններով, չափավոր տաք ամառներով և զով աշուններով:

Համայնքի 2024 թվականի բյուջեով սոցիալական նպաստների հոդվածով կատարված է 7 մլն դրամի պլանավորում, ինչը 3,1 մլն դրամով ավել է 2022 և 2023 թվականների պլանավորումների համեմատությամբ: Ավելացումը պայմանավորված է նախկին Սիսիան և Գորայք համայնքների միավորմամբ: Այդ հոդվածով պլանավորված միջոցները, որպես սոցիալական աջակցություն, համապատասխան փաստաթղթավորման հիման վրա, տրամադրվում են համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ֆինանսական աջակցության և բնաիրային օգնության ձևով:

Համայնքի սոցիալական խնդիրների գնահատման, վեր հանման և կառավարման տեսանկյունից, որպես առաջին կարևոր քայլ, պետք է նշել սոցիալական հանձնաժողովի ձևավորումը, իհարկե, կարևորելով նաև հանձնաժողովի հետագա ճիշտ աշխատանքի կազմակերպումն ու համակարգումը:

Սիսիան համայնքի սոցիալ-ժողովրդագրական, բնակլիմայական և սոցիալ-տնտեսական վիճակի վերբերյալ այլ տվյալներ կարող եք գտնել Սիսիան համայնքի 2023-2027թթ զարգացման հնգամյա ծրագրում[1]:

---

[1] **Սիսիան համայնքի 2023-2027թթ զարգացման հնգամյա ծրագիր**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*Աղյուսակ 1*

| | Տվյալի անվանումը | Առ՝ 01.01.2022 | Առ՝ 01.01.2023 | Առ՝ 01.01.2024 |
|---|---|---|---|---|
| 1 | **Մշտական բնակչության թիվ, որից՝** | 29791 | 31484 | 31810 |
| 1.1 | Արական | 15070 | 15929 | 16085 |
| 1.2 | Իգական | 14721 | 15555 | 15725 |
| 1.3 | **Որից մինչև 18 տարեկան, որից՝** | 6631 | 6956 | 7060 |
| 1.3.1 | Արական | 3427 | 3601 | 3669 |
| 1.3.2 | Իգական | 3204 | 3355 | 3391 |
| 1.4 | **Որից 65-75 տարեկաններ, որից՝** | 2759 | 3155 | 3428 |
| **1.4.1** | Արական | 1217 | 1378 | 1512 |
| **1.4.2** | Իգական | 1542 | 1777 | 1916 |
| 1.5 | **Որից 75-ից բարձր, որից՝** | 1249 | 1347 | 1408 |
| **1.5.1** | Արական | 473 | 520 | 546 |
| **1.5.2** | իգական | 776 | 827 | 862 |

*Աղյուսակ 2*

| | Տվյալի անվանումը | Տարեթիվը | | |
|---|---|---|---|---|
| | | **2022** | **2023** | **2024** |
| 2 | Տնային տնտեսությունների թիվ | 7448 | 7871 | 7975 |
| 3 | Երեխաների թիվ | 6631 | 6956 | 7060 |
| 4 | Գործազուրկներ, որից՝ | 517 | 480 | 421 /առ՝ 31.07.2024/ |
| 4.1 | կանայք | 349 | 306 | 268 |
| 4.2 | Աշխատաշուկայում անմրցունակ աշխատանք փնտրողներ, ընդամենը, որից՝ | 496 | 432 | 371 |
| 4.2.1 | կանայք | 333 | 275 | 237 |
| 5 | Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝ | 720 | 658 | 600 |
| 5.1 | կանայք | 505 | 426 | 371 |
| 6 | Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 2228 | 2248 | 2165 |
| 7 | Հաշվառված հաշմանդամություն ունեցող երեխաների | 100 | 92 | 81 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թիվը | | | |
| 8 | Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում 28.01 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների թիվը | 609 | 508 01.10.2023 թ-ի դրությամբ | 559 |
| 9 | Բազմազավակ ընտանիքների թիվը /4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվ/ | 79 | 73 | 33 |
| 10 | Միայնակ բնակվող տարեցների թիվը | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 70 |
| 11* | Անժառանգ տարեցների թիվը | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 64 |
| 12 | Միածնող ընտանիքների թիվը /ՄՍԾ-ում գրանցված ծնողներից մեկին կորցրած ընտանիքները/ | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 35 |
| 13 | Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների թիվը | 143 | 114 | 110 |
| 14 | Տեղահանված ընտանիքների թիվը | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 379 |
| 15 | Կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 3 |
| 16 | Կենսաթոշակառուների թիվը | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 4504 |
| 17 | Ընտանեկան բռնության դեպքեր | 21 | 17 | Տվյալներ չկան |
| 18 | 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված, անհետ կորած ընտանիքի անդամ ունեցող ընտանիքների թիվը | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 80 |
| 19 | 2022-2023թթ. ընթացքում զիվորական ծառ. ընթացքում զոհեր | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 7 |
| 20 | Հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը ընդամենը, որից՝ | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 74 |
| 20.1 | երեխաներ | Տվյալներ չկան | Տվյալներ չկան | 21 |
| 21 | Փախստականների թիվ /2020 թվականին համայնք տեղափոխված արցախցիներ/ | Տվյալներ չկան | 638 | 537 |

*Միայնակ բնակվող տարեցների թիվը ներկայացված է ՄՍԾ—կողմից տրամադրված տվյալների համաձայն, սակայն մեր ուսումնասիրություններով միայն համայնքի բնակավայրերից ստացված տվյալներով միայնակ բնակվող տարեցների թիվը 386 է, որից 25՝ անժառանգ: Համայնքում բնակվում են նաև Արցախից բռնի տեղահանված 13 միայնակ տարեց:

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ և ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| Անվանում | Քանակ | Նկարագրություն(եթե առկա է) |
|---|---|---|
| ՆՈՒՀ-երի թիվը | 4 | 4 ՆՈՒՀ և 20 բնակավայրերի խմբեր |
| ԲԿ-ների թիվը | 1 | Սիսիանի ԲԿ |
| ԱԱՊ և ամբուլատորիա | 28 | որից՝ 6 ԱԱՊ և 22 բնակավայրերի բուժկետեր |

| | | |
|---|---|---|
| Մշակույթի/Արվեստի դպրոցների թիվը | 4 | որից՝ 3 արտադպրոցներ և 1 մշակույթի տուն |
| Սպորտդպրոցների թիվը | 2 | համայնքային ենթակայությամբ չեն |
| Արտադպրոցական կրթական հաստատությունների թիվը | 5 | համայնքային ենթակայությամբ են |
| Սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ների թիվը | 6 | Ներկայացված է հաջորդ բաժնում |
| Համայնքի բալանսում առկա չօգտագործվող շինությունների թիվը | | Սիսիան քաղաքում առկա չեն, իսկ բնակավարերում առկաները գտնվում են խիստ անմխիթար վիճակում |
| Սոցիալական բնակարանների թիվը | - | |
| Համայնքում ԲՈՒՀ-երի թիվը | 1 | ՀԱԱՀ Սիսիանի մ/ճ |
| Այլ | 2 | որից՝ 1 ՀԱԱՀ հենակետային քոլեջն է, մյուսը՝ միջին մասնագիտական |

## Այլ տվյալներ

| | |
|---|---|
| **1. Տրանսպորտային հաղորդակցություն** | |
| Տրանսպորտային կապը մարզկենտրոնի հետ՝ | Տաքսի ծառայություն |
| Տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ՝ | Տաքսի և երթուղային տաքսի ծառայություն: Երթուղային տաքսին գործում է ամենօրյա հաճախականությամբ մեկ անգամ Սիսիան- Երևան և հակառակ ուղղությամբ: |
| Ներհամայնքային տրանսպորտ՝ | 4 գիծ եվ տաքսի ծառայություն |
| Տրանսպորտային կապը հարևան համայնքի հետ՝ | երթուղային տաքսի միայն Գորիս համայնքի հետ ամենօրյա հաճախականությամբ, օրվա մեջ մեկ անգամ: |
| **2. Տնտեսական ներուժը** | |
| Համայնքում սոցիալական պատասխանատվություն ցուցաբերած մասնավոր կազմակերպություններ | Այս պահին բացակայում են |
| Համայնքում խոշոր հարկատուների առկայություն՝ | Համայնքում խոշոր հարկատուներ չկան |
| Այլ | - |
| **3. Սոցիալական աջակցության պետական կառույցները համայնքում** | |
| Համայնքում պետական դրամաշնորհով սոցիալական ծառայություններ | Առաքելությու Հայաստան ԲՀԿ - բարեգործական ճաշարան և տնային խնամք տարեցների և անապահովների համար,<br>ԳՈՒՄ ՀԿ – Սիսիանում գործում է վերջինիս <<Բարեկամ կենտրոնը>>, որը երեխաներին ուղղված սոցիալական և կրթական ծրագիր է իրականացնում,<br>Վորդ Վիժն - <<Նավակ>> ծրագրի շրջանակներում մատուցում են սոցիալական և կրթական ուղղվածության ծառայություններ երեխաներին |
| Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող | ՄՍԾ |

| | |
|---|---|
| պետական հաստատություններ | |
| Համայնքում ՄՍԾՏԿ-ի առկայությունը | Այո |
| Համայնքում ՏՄԱԿ-ի առկայությունը | Այո |
| Այլ | |
| **4. Սոցիալական աջակցության ոլորտի ՔՀԿ-ներ** | |
| Համայնքում սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ներ | 1. Առաքելություն Հայաստան ԲՀԿ<br>2. ԳՈՒՄ ՀԿ<br>3. ՀՕՖ<br>4. Վորդ Վիժն<br>5. Սոցիալական աշխատողների ասոցիացիա (համայնքում 2 սոցիալական. աշխատողների առկայություն)<br>6. Միասին հանուն համայնքների սոցիալական աջակցության ՀԿ- (սոց. աջակցության ծրագրեր) |
| Համյանքում սոցիալական խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ նախաձեռնություն՝ | **Չկան** |
| Սոցիալական տարբեր խմբերի շահերը պաշտպանող ՔՀԿ-ներ | **Չկան** |
| Միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցչություններ | **Չկան** |
| իրավապաշտպան, տեղեկատվական թեժ-գծեր կամ վստահության հեռախոսահամարներ | **Չկան** |
| Համայնքում բարեգործական հիմնադրամներ | **«Սիսիան» ԲՀԿ** – հիմնադրամի գործունեությունն ուղղված է Սիսիան համայնքի տնտեսական, սոցիալական, կենցաղային, մշակութային պայմանների բարելավման, վերականգնման և զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների անդամների, ծերերի, հաշմանդամների,ուսանողների, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության գոյամարտին մասնակցած, զոհված և վիրավորված ազատամարտիկների ընտանիքների աջակցությանը, և մի շարք այլ նպատակների իրագործմանը: |
| Այլ | - |
| **5. ՏԻՄ մարմիններ** | |
| Համայնքի ավագանու կամ ղեկավարի կողմից սոցիալական աջակցության մասին իրականացված որոշումներն և դրանց բովանդակությունը | **Առկա է**<br>Համայնքի 2024 թվականի բյուջեով սոցիալական նպաստների հոդվածով 7 մլն դրամի պլանավորում, սոցիալական հանձնաժողովի ձևավորում: Համայնքի բյուջեի նշված հոդվածով պլանավորումները կատարվել են տարիներ ի վեր: |
| Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող | **Չկան** |

| | |
|---|---|
| համայնքային հաստատություններ | |
| Այլ | |
| **6. Սոցիալական ծառայությունների էկոհամակարգը համայնքում** | |
| Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպություններ | **Չկան** |
| Համայնքում սոցիալական ծառայությունների մատուցող ՔՀԿ-ներ | 1. Առաքելություն Հայաստան ԲՀԿ<br>2. ԳՈՒՄ ՀԿ<br>3. Սոցիալական աշխատողների ասոցիացիա (համայնքում 2 սոցիալական աշխատողների առկայություն)<br>4. Միասին հանուն համայնքների սոցիալական աջակցության ՀԿ- (սոց. աջակցության ծրագրեր) |
| Այլ | |
| Սոցիալական ծառայությունների նախորդ տարիների փորձառութունը | Տարեցների ցերեկային խնամք, Բարեգործական ճաշարան, Նավակ երեխաների ցերեկային կենտրոնի ծառայություն |
| Հարևան համայնքների ներուժի նկարագրություն սոցիալական ծառայությունների համատեքսում՝ | Հարևան քաղաքային համայնքը Գորիսն է, որտեղ գործող ՔՀԿ-ները և միջազգային կառույցները սա բավականին շատ են և ՏԻՄ-ի հետ համագործակցային աշխատանքի արդյունքում կարող են ծառայությունները առավել մատչելի և արդյունավետ դարձնել |

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

| Ոլորտը | Մասնագետներ | Տվյալներ, ( եթե առկա են) |
|---|---|---|
| Սոցիալական | 1. Սոցիալական աշխատողներ | 2 |
| | 2. Սոցիալական մանկավարժ | 8 |
| | 3. Սոցիալական սատարողներ և սոցիալական սպասարկման այլ մասնագետներ | Չկան |
| Բժշկական | 4. Վերականգնողաբան | Չկա |
| | 5. Նյարդաբան | 1 |
| | 6. Հոգեբույժ | 1 |
| | 7. Հոգեթերապևտ | Չկա |
| Իրավական | 8. Փաստաբաններ | 2-ից ավել |
| | 9. Իրավաբաններ | 2-ից ավել |
| | 10. Իրավախորհրդատու | Չկա |
| Կրթական-մասնագիտական | Կրթական ծրագրերով զբաղվող մասնագետներ, կարիերայի կենտրոններ, մասնագիտական կողմնորոշման մասնագետներ և այլ( քոլեջներ և ՄՈՒՀ) | Առկա են |

| | | |
|---|---|---|
| Հարբժշկական | Հոգեբաններ | 13 |
| | Կինեզիոլոգ | 2 |
| | Էրգոթերապիստ | Չկա |
| | Օրթեզիստ | Չկա |
| | Պրոթեզիստ | Չկա |
| | Լոգոպեդ | 3 |
| | Հատուկ մանկավարժ | 8 |
| | Սուրդոմանկավարժ | Չկա |
| | Տիֆլոմանկավարժ | 1 |
| | Արտ-թերապիստ | Չկա |
| | Խաղաթերապիստ | Չկա |
| | Դիաբետի դպրոցի մասնագետ | 1 |
| | Մայրության դպրոցի մասնագետներ | 2 |
| | Կրծքով սնուցման մասնագետներ | 2 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**Համայնքի առաջնային կարիքներն են՝**

**1.** Սոցիալական և բժշկական վերականգնողական կենտրոնների անհրաժեշտություն, քանի որ եղած ծառայությունները բավարար չեն:

**2.** Մասնագիտացված տնային խնամքի կազմակերպում Սիսիան քաղաքից դուրս ապրող բնակավայրերի միայնակ տարեցների և հոգեկան առողջության խնդիրներով անձանց համար, քանի որ այսպիսի ծառայություններ համայնքում բացակայում են:

**3.** Ցերեկային կենտրոնի հիմնում (մեծահասակների և երիտասարդների համար)՝ զբաղվածության խթանման և հմտությունների տրամադրման համար՝ անկախ կյանքի ծառայությունների բաղադրիչով քանի որ այսպիսի ծառայություններ համայնքում բացակայում են:

**4.** Համայնքում առկա՝ պետական կամ ոչ պետական ֆինանսավորմամբ սոցիալական ծառայությունների ծավալը բավարար չէ: Գրեթե բոլոր ծառայությունների մասով անհրաժեշտ է ընդլայնում:

**5.** Գյուղական բնակավայրերում չկա վերականգնողական կամ խնամքի որևէ տեսակի ծառայություն, ինչի արդյունքում սոցիալական ծառայությունների կարիք ունեցող բնակիչը ստիպված է լինում վճարել և հասնել այլ քաղաք, կամ չստանալ անհրաժեշտ ծառայությունը:

**6.** Համայնքում կարևորագույն խնդիրն աշխատատեղերի բացակայության խնդիրն է: Ունենալով գյուղատնտեսական մեծ ներուժ, բայց քաղաքային մեծ թվով բնակչություն՝ զբաղվածության ապահովման ծրագրերը պետք է իրականացվեն ինչպես գյուղական մասնագիտությունների, միջավայրին համապատասխան, այնպես էլ վերամասնագիտացման և հատկապես աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կոնկրետ մշակված ծրագրերին համապատասխան: Համայնքում դեռահասները և երիտասարդները

մասնագիտական կողմնորոշման հարցում լիարժեք աջակցություն չեն ստանում, ըստ այդմ՝ մեծ է ռիսկը, որ հետագայում կարող են համալրել գործազուրկների ցանկը:

**7.** Սոցիալական ծառայությունների մյուս մարտահրավերը հարմարեցված քաղաքային տրանսպորտի և տաքսի ծառայության բացակայությունն ընդհանրապես խոչընդոտում է հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի և արժանապատիվ փոխադրումը:

**8.** Հոգեսոցիալական աջակցության ծառայությունների բացակայությունը կարևոր հանգամանք է համայնքում: Այս ծառայությունները նախևառաջ անհրաժեշտություն են հատկապես պատերազմի հետևանքների վերացման ճանապարհին՝ ընդհանուր բնակչության հոգեկան առողջության պահպանման նպատակով:

**9.** Համայնքում մեծ է բազմազավակ ընտանիքների թիվը, ինչը նաև անհրաժեշտություն է առաջացնում համայնքում ստեղծելու ընտանիքների հզորացման, սոցիալ-տնտեսական ակտիվացման և արտադպրոցական կրթական ծրագրեր:

**10.** Հիմնական խնդիրները, որոնք խորացնում են վերը նշված կարիքները և պետք է ծրագրերը ուղղել այս ուղղությամբ՝

1) Համայնքի բնակիչների մոտ սոցիալական իրավունքների իրազեկման պակաս, ուղղորդման ծառայությունների պակաս,
2) Ոչ կանոնավոր ուղևորափոխադրում/տրանսպորտ,
3) Համայնքի աշխարահագրական սփռվածությունը:

## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| ***S- Ուժեղ կողմեր*** | ***W- Թույլ կողմեր*** |
|---|---|
| • Համայնքային իշխանությունների շահագրգռվածությունը և պատրաստակամությունը համայնքում սոցիալական ծրագրեր իրականացնելու հարցում,<br>• Համայնքում սոցիալական որոշակի ծառայությունների մատուցման փորձառություն,<br>• Նոր կառուցվող/հիմնանորոգվող ենթակառուցվածքներ | • Սոցիալական տարբեր խմբերի շահերը պաշտպանող ՔՀԿ-ների բացակայություն,<br>• Իրազեկման կենտրոնների բացակայություն,<br>• Համայնքում պետական, համայնքային կամ մասնավոր հիմունքներով սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների սակավություն,<br>• Համագործակցության /գործընկերային կապերի անբավարար մակարդակ,<br>• Մասնագիտական ներուժի անբավարար քանակ: |
| **O - Հնարավորություններ** | **T- Սպառնալիքներ** |
| • Վերապատրաստումների և վերաորակումների դեպքում որակյալ աշխատուժի մեծ ներուժ,<br>• Իրենց իրավունքների, պարտականությունների և հնարավորությունների | • Համայնքից բարձր որակավորում ունեցող մասնագետների արտագաղթ,<br>• Տեղացի մասնագետների նկատմամբ անվստահության որոշակի մակարդակի դրսևորում, |

| | |
|---|---|
| մասին սոցիալապես խոցելի խմբերի իրազեկվածության ավելի բարձր մակարդակի ապահովում,<br>● Համայքնում սոցիալական ծրագրերի իրականացման պարագայում մայրաքաղաքում մատուցվող ծառայություններից օգտվելու անհրաժեշտության նվազեցում | ● Մատուցվող ծառայությունների, հնարավորությունների ոչ բավարար մակարդակի ապահովում: |

## ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Սոցիալական աջակցության բնագավառում մեր տեսլականն է համայնքում ունենալ սոցիալական տարբր խմբերի՝ տարեցների, երիտասարդների, հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձանց կարիքերի բավարարմանն ուղղված սոցիալական ծառայություններ՝ ապահովելով այն մարդկանց բարեկացությունը և արժանապատիվ կյանքը ովքր գտնվում են կյանքի դժվարին իրավիճակում կամ կարող են գտնվել այդպիսի իրավիճակի ռիսկի ներքո:

Նշված տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները.

1. Խթանել տարեցների, ինչպես նաև հոգեկան առողջության խնդրով անձանց սոցիալական ծառայությունների ստեղծումը և ընլայնումը՝ մասնագիտացված տնային սպասարկման և ցերեկային կենտրոնի ակտիվ գործարկման միջոցով,
2. Խթանել երիտասարդների սոցիալական պաշտպանությունը՝ վերականգնողական և ցերեկային կենտրոնների ակտիվ գործարկման միջոցով,
3. Ապահովել հաշմանդամության կարգավիճակ ունեցող մինչև 18 տարեկան անձանց սոցիալական ներառումը՝ սոցիալ-վերականգնողական կենտրոնի գործարկման միջոցով,
4. Ընդլայնել համագործակցությունը սույն ծրագրի 7-րդ գլխով սահմանված գնահատված սոցիալական մյուս կարիքների բավարարման նպատակով հանդես եկող դոնորների/ՔՀԿ-ների հետ:

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

**Համայնքի հիմնական (առաջնահերթ) առաջարկություններն են՝**

1. **Ներդնել** տարեցների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային խնամքի ծառայություն
2. **Կազմակերպել** համայնքի գործազուրկ կամ աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծառայություններ
3. **Հիմնել** հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար ցերեկային կենտրոն

**Այլ առաջարկներ՝**

1. Համայնքահենք համալիր սոցիալական ծառայությունների ընդլայնում՝ հիմնական սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով՝ ուղղված հատկապես զարգացման առանձնահատկություններ, հաշմանդամություն ունեցող երեխաներին
2. Գյուղական բնակավայրերում սոցիալ-վերականգնողական և սոցիալ-հոգեբանական ծառայությունների ներդրում, առկայության խթանում՝ այդ թվում մոբիլ խմբերի միջոցով
3. Բազմազավակ ընտանիքների կարիքների գնահատման հիման վրա թիրախային և հասցեական ծառայությունների փաթեթի տրամադրում
4. Սոցիալական ձեռնարկատիրության խթանում՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների զբաղվածության ապահովման նպատակով, ինչպես նաև զբաղվածության խթանման ծրագրերը աշխատաշուկայում անմրցունակ, գործազուրկ համարվող անձանց համար:
5. Տրանսպորտի փոխհատուցում (մասնավորապես գյուղական բնակավայրերի բնակիչների համար), այդ թվում՝ հատուկ փոխադրամիջոցի հաշվարկով, կամ հատուկ/հարմարեցված փոխադրամիջոց՝ «Սոցիալական տաքսի» ծառայություն:
6. Սոցիալական ծառայություններ մատուցող մասնագետների, վարչական շրջանների աշխատակազմերի շարունակական վերապատրաստումների անցկացում տարեցների, հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների անդամների, բռնության հետ կապված դեպքերի, փակ հաստատություններից վերադարձածների և մարտական գործողություններին մասնակցած անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
7. Ըստ գնահատված կարիքների՝ համայնքի բնակիչների մոտ ֆինանսատնտեսական գրագիտության, զբոսաշրջային բիզնես ծրագրերի, ծնողավարման, կենցաղավարման և այլ սոցիալական հմտությունների կարողությունների զարգացման գործողությունների իրականացում

**Տրամաբանական հենք**

| հ/ հ | Խնդիրը | Նպատակը | Վերջնարդյունքները | Միջանկյալ արդյունքները | Անհրաժեշտ գործողությունները | Պահանջվող ռեսուրսները |
|---|---|---|---|---|---|---|
| | Համայնքում տարեցների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար տնային խնամքի ծառայություններ ի և սոցիալական սպասարկման տրամադրման անհրաժեշտությո ւն | Տարեցների կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային խնամքի և սոցիալական սպասարկման, ինչպես նաև ժամանցի կազմակերպում: | Համայնքում միայնակ կամ անժառանգ տարեցներն, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տնային պայմաններում ստանում են անհրաժեշտ ծառայությունները, մասնավորապես՝ խնամքի, սոցիալական սպասարկման ծառայություններ, ինչպես նաև կազմակերպվում է նրանց առօրյան և ժամանցը: | -Նշված ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթը հայտարարված է,<br>-մրցույթի արդյունքներն ամփոփված են և ծառայությունների տրամադրման պայմանագիրը կազմակերպության հետ ստորագրված է,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերը, չափանիշները, գործիքակազմը մշակված է և հաստատված,<br>-համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին | -Ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի իրականացում,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթի հայտարարում,<br>-մրցույթի արդյունքների ամփոփում, հաղթող կազմակերպության որոշում,<br>-կազմակերպության հետ ծառայությունների տրամադրման պայմանագրի ստորագրում,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերի, չափանիշների, գործիքակազմի մշակում և հաստատում,<br>-համայնքում ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին իրազեկվածության ապահովում | Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ, տրանսպորտային միջոցներ |
| | Համայնքում գործազուրկ կամ | Համայնքում գործազուրկ կամ | Գործազուրկ կամ աշխատանք փնտրող | -Նշված ծառայությունների պատվիրակման համար | Ծառայությունների | Ֆինանսավորում, մասնագիտական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանք փնտրող անմրցունակ խմբերի, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման անհրաժեշտություն | աշխատանք փնտրող /այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող/ անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծառայությունների, մասնավորապես մասնագիտական ուսուցումների, սոցիալական կամ փափուկ հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում | /այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող/ անձինք ներգրավված են մասնագիտական ուսուցման կամ վերապատրաստման դասընթացներում, նրանց տրամադրվում են սոցիալական կամ փափուկ հմտությունների զարգացմանն ուղղված ծառայություններ | անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթը հայտարարված է,<br>-մրցույթի արդյունքներն ամփոփված են և ծառայությունների տրամադրման պայմանագիրը կազմակերպության հետ ստորագրված է,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերը, չափանիշները, գործիքակազմը մշակված է և հաստատված,<br>-համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին | պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի իրականացում,<br><br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթի հայտարարում,<br><br>-մրցույթի արդյունքների ամփոփում, հաղթող կազմակերպության որոշում,<br><br>-կազմակերպության հետ ծառայությունների տրամադրման պայմանագրի ստորագրում,<br><br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերի, չափանիշների, գործիքակազմի մշակում և հաստատում,<br>-համայնքում ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին իրազեկվածության | ներուժ,<br><br>կամավորներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովում | |
| | Համայնքում երիտասարդների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար ցերեկային պայմաններում ծառայությունների տրամադրման անհրաժեշտություն | Երիտասարդների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, համար ցերեկային պայմաններում ակտիվացման, սոցիալական, հոգեբանական և այլ ծառայությունների տրամադրում | Համայնքում երիտասարդներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ցերեկային կենտրոնում տրամադրվում է ակտիվացման, սոցիալական, հոգեբանական, ժամանցի կազմակերպման ծառայություններ | -Նշված ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթը հայտարարված է,<br>-մրցույթի արդյունքներն ամփոփված են և ծառայությունների տրամադրման պայմանագիրը կազմակերպության հետ ստորագրված է,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերը, չափանիշները, գործիքակազմը մշակված է և հաստատված,<br>-համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին | Ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի իրականացում,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթի հայտարարում,<br>-մրցույթի արդյունքների ամփոփում, հաղթող կազմակերպության որոշում,<br>-կազմակերպության հետ ծառայությունների տրամադրման պայմանագրի ստորագրում,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերի, չափանիշների, գործիքակազմի մշակում և հաստատում,<br>-համայնքում ծառայությունների և | Ֆինանսավորում,<br>մասնագիտական ներուժ,<br>կամավորներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | դրանք տրամադրող կազմակերպության մասին իրազեկվածության ապահովում | |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԵՐ

### Ծրագիր 1 (անձնագիր)

<table>
<tr><td colspan="6">Անվանումը՝ Տարեցների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային խնամքի ծառայության ներդրում</td></tr>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="5">Բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="5">Տարեցների կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային խնամքի և սոցիալական սպասարկման, ինչպես նաև ժամանցի կազմակերպում:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքներ</td><td colspan="5">Համայնքում միայնակ կամ անժառանգ տարեցներն, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տնային պայմաններում ստանում են անհրաժեշտ ծառայությունները, մասնավորապես՝ խնամքի, սոցիալական սպասարկման ծառայություններ, ինչպես նաև կազմակերպվում է նրանց առօրյան և ժամանցը:</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2025</td><td>2026</td><td colspan="2">2027</td></tr>
<tr><td>40</td><td>70</td><td colspan="2">100</td></tr>
<tr><td rowspan="14">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="5">Նշված ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են,</td></tr>
<tr><td rowspan="3">Մրցույթի փաթեթների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td>1</td><td>1</td><td>1</td><td>1</td></tr>
<tr><td colspan="5">-մրցույթի արդյունքներն ամփոփված են և ծառայությունների տրամադրման պայմանագիրը կազմակերպության հետ ստորագրված է,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերը, չափանիշները, գործիքակազմը մշակված է և հաստատված,</td></tr>
<tr><td rowspan="3">Մրցույթի ընթացակարգերին համապատասխանության աստիճան</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td>0%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td></tr>
<tr><td colspan="5">համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին</td></tr>
<tr><td rowspan="3">Հրապարակումների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2024</td><td>2025</td></tr>
<tr><td>2</td><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական գործողությունները | -Ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի իրականացում,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթի հայտարարում,<br>-մրցույթի արդյունքների ամփոփում, հաղթող կազմակերպության որոշում,<br>-կազմակերպության հետ ծառայությունների տրամադրման պայմանագրի ստորագրում,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերի, չափանիշների, գործիքակազմի մշակում և հաստատում,<br>-համայնքում ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին իրազեկվածության ապահովում |
| Ծրագրի բյուջեն | 15,806,880 ՀՀ դրամ /70 շահառուի հաշվարկով/ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ, տրանսպորտ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | արտակարգ իրավիճակներ կամ ռազմական դրություն<br>բռնության դեպքերի աճի ռիսկ |
| Ծրագրի հիմնական շահառուները | Միայնակ տարեցներ և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, ովքեր ունեն տնային խնամքի կարիք |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2025-2027 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Սույն ծրագրով նախատեսված ծառայությունն ուղղված է համայնքում բնակվող միայնակ տարեցների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կազմակերպմանը տնային պայմաններում: Տնային խնամքի ծառայությունը կենթադրի աջակցություն ինքնախնամքի, անձնական և բնակարանի հիգիենայի պահպանման, առօրյա գնումների կատարման հարցում, ինչպես նաև ուղեկցում անհրաժեշտ ծառայություններից օգտվելու համար: Տնային խնամքի ծառայության միջոցով նախատեսվում է օժանդակություն նաև շահառուների առօրյայի կազմակերպման գործընթացում: |

**Ֆինանսավորման սխեմա՝ Ծրագիր 1**

| Միջոցառումներ | Գնահատված ծախսեր | Ֆինանսավորման աղբյուր | | | | Ֆինանսավորման պակաս | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տեղական բյուջե | Պետական, ռեգիոնալ բյուջեներ | Ձեռնարկություններ | Դոնորներ | | |
| **Տրասպորտային միջոցի ամորտիզացիա** | 1,080,000 | 1,080,000 | | | | | Փոխհատուցվելու է տ/մ մաշվածությունը |
| **Գույքի ամորտիզացիա** | 360,000 | 360,000 | | | | | Փոխհատուցվելու է գույքի մաշվածությունը |
| **Տարածքի պահպանման ծախսեր** | 480,000 | 480,000 | | | | | Վարչական շենքի պահպանման ծախսեր |
| **Մասնագետների վարձատրություն** | 8,160,000 | 8,160,000 | | | | | Նախատեսված է 4 մասնագետի վարձատրության համար |
| **Տրանսպորտային ծախսեր** | 2,192,400 | 2,192,400 | | | | | Հաշվարկված է օրեկան միջինը 70 կմ համար, աշխատանքային օրերի թիվը՝ 261 |
| **Խնամքի և հիգիենայի պարագաներ** | 600,000 | 600,000 | | | | | |
| **Այլ չնախատեսված ծախսեր** | 300,000 | 300,000 | | | | | |
| **Կազմակերպության շահույթ 20%** | 2,634,480 | 2,634,480 | | | | | |

**Մոնիթորինգի պլան՝ Ծրագիր 1**

| Գործողություններ / նախագծերի գաղափարներ | Տևողություն (սկիզբ / ավարտ) | Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ | Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ | Ակնկալվող արդյունքներ երարաժամկետ |
|---|---|---|---|---|
| Տարեցների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային խնամքի ծառայության ներդրում | 2025-2027թթ | Հրապարակումների թիվ - 5 | Մրցույթի փաթեթների թիվ - 1 | Շահառուների թիվ - 100 |
| | | | Մրցույթի ընթացակարգերին համապատասխանության աստիճան -100% | |

**Ծրագիր 2 (անձնագիր)**

<table>
<tr><td colspan="6">Անվանումը՝ Համայնքում գործազուրկ կամ աշխատանք փնտրող /այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող/ անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծառայությունների կազմակերպում</td></tr>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="5">Բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="5">Համայնքում գործազուրկ կամ աշխատանք փնտրող /այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող/ անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծառայությունների, մասնավորապես մասնագիտական ուսուցումների, սոցիալական կամ փափուկ հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքներ</td><td colspan="5">Գործազուրկ կամ աշխատանք փնտրող /այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող/ անձինք ներգրավված են մասնագիտական ուսուցման կամ վերապատրաստման դասընթացներում, նրանց տրամադրվում են սոցիալական կամ փափուկ հմտությունների զարգացմանն ուղղված ծառայություններ</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td></td><td>40</td><td>60</td><td>80</td></tr>
<tr><td rowspan="14">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="5">-Նշված ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են,</td></tr>
<tr><td rowspan="3">Մրցույթի փաթեթների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td></td><td>1</td><td>1</td><td>1</td></tr>
<tr><td colspan="5">-ծառայությունների պատվիրակման համար մրցութը հայտարարված է,<br>-մրցույթի արդյունքներն ամփոփված են և ծառայությունների տրամադրման պայմանագիրը կազմակերպության հետ ստորագրված է,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերը, չափանիշները, գործիքակազմը մշակված է և հաստատված,</td></tr>
<tr><td rowspan="3">Մրցույթի ընթացակարգերին համապատասխանության աստիճան</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td>0%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td></tr>
<tr><td colspan="5">համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին</td></tr>
<tr><td rowspan="3">Հրապարակումների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2024</td><td>2025</td><td>2024</td><td>2025</td></tr>
<tr><td>2</td><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական գործողությունները | Ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի իրականացում,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթի հայտարարում,<br>-մրցույթի արդյունքների ամփոփում, հաղթող կազմակերպության որոշում,<br>-կազմակերպության հետ ծառայությունների տրամադրման պայմանագրի ստորագրում,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերի, չափանիշների, գործիքակազմի մշակում և հաստատում,<br>-համայնքում ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին իրազեկվածության ապահովում |
| Ծրագրի բյուջեն | 16,572,000 ՀՀ դրամ /60 շահառուի հաշվարկով/ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ,<br>կամավորներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն, տրանսպորտային կամ ճանապարհային խնդիրներ |
| Ծրագրի հիմնական շահառուները | գործազուրկ կամ աշխատանք փնտրող , հաշմանդամություն ունեցող աշխատունակ տարիքի անձինք |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2025-2027 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագիրն ուղղված համայնքում բնակվող գործազուրկ կամ աշխատանք փնտրող և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-տնտեսական ակտիվացմանը և ենթադրում է աջակցության տրամադրում աշխատանք գտնելու կամ ինքնազբաղվածություն ունենալու հարցում: |

**Ֆինանսավորման սխեմա՝ Ծրագիր 2**

| Միջոցառումներ | Գնահատված ծախսեր | Ֆինանսավորման աղբյուր | | | | Ֆինանսավորման պակաս | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տեղական բյուջե | Պետական, ռեգիոնալ բյուջեներ | Ձեռնարկություններ | Դոնորներ | | |
| **Տարածքի վարձակալություն և պահպանության ծախսեր** | 1,800,000 | | | | 1,800,000 | | Ներառում է տարածքի վարձավճարը և կոմունալ ծախսերը |
| **Մասնագետների վարձատրություն** | 8,160,000 | | | | 8,160,000 | | Նախատեսված է 4 մասնագետի վարձատրության համար |
| **Ուսումնական նյութեր և պարագաներ** | 900,000 | | | | 900,000 | | |
| **Շահառուների տրանսպորտային ծախսեր** | 2,700,000 | | | | 2,700,000 | | Յուրաքանչյուր այցի համար շահառուին կտրամադրվի ճանապարհածախսի փոխհատուցում կամ կկազմակերպվի նրա տեղափոխությունը |
| **Այլ չնախատեսված ծախսեր** | 300,000 | | | | 300,000 | | |
| **Կազմակերպության շահույթ 20%** | 2,712,000 | | | | 2,712,000 | | |

**Մոնիթորինգի պլան՝ Ծրագիր 2**

| **Գործողություններ / նախագծերի գաղափարներ** | **Տևողություն (սկիզբ / ավարտ)** | **Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ** | **Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ** | **Ակնկալվող արդյունքներ երարաժամկետ** |
|---|---|---|---|---|
| Համայնքում գործազուրկ կամ աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծառայությունների կազմակերպում | 2025-2027թթ | Հրապարակումների թիվ - 5 | Մրցույթի փաթեթների թիվ - 1 | Շահառուների թիվ - 80 |
| | | | Մրցույթի ընթացակարգերին համապատասխանության աստիճան -100% | |

**Ծրագիր 3 (անձնագիր)**

<table>
<tr><td colspan="5"><b>Անվանումը`</b> Համայնքի երիտասարդների /այդ թվում` հաշմանդամություն ունեցող/ համար ցերեկային կենտրոնի հիմնում</td></tr>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="4">Բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="4">Համայնքի երիտասարդնեի համար /այդ թվում` հաշմանդամություն ունեցող/ ցերեկային պայմաններում ակտիվացման, սոցիալական, հոգեբանական և այլ ծառայությունների տրամադրում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքներ</td><td colspan="4">Համայնքում երիտասարդներին /այդ թվում` հաշմանդամություն ունեցող/ ցերեկային կենտրոնում տրամադրվում է ակտիվացման, սոցիալական, հոգեբանական, մշակութային, ժամանցի կազմակերպման ծառայություններ և ինքնադրսևորման հարարավորություններ:</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td>40</td><td>60</td><td>80</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="4">Նշված ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են</td></tr>
<tr><td rowspan="3">մշակված փաթեթների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td>1</td><td>1</td><td>1</td></tr>
<tr><td colspan="4">համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին</td></tr>
<tr><td rowspan="3">Հրապարակումների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="4">-Նշված ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերն իրականացված են,<br>-ծառայությունների պատվիրակման համար մրցույթը հայտարարված է,<br>-մրցույթի արդյունքներն ամփոփված են և ծառայությունների տրամադրման պայմանագիրը կազմակերպության հետ ստորագրված է,<br>-ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերը, չափանիշները, գործիքակազմը մշակված է և հաստատված,<br>-համայնքն իրազեկված է ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="4">12,396,000 ՀՀ դրամ /60 շահառուի հաշվարկով/</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="4">Ֆինանսավորում,<br>մասնագիտական ներուժ,<br>կամավորներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="4">արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն, տրանսպորտային կամ ճանապարհային խնդիրներ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական շահառուները | Երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող 16-35 տարեկան անձինք |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2025-2027 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագիրն ուղղված է համայնքում ցերեկային կենտրոնի միջոցով երիտասարդներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ սոցիալական, հոգեբանական, ակտիվացման, ժամանցի կազմակերպման, մշակութային և այլ ծառայությունների տրամադրմանը՝ պատվիրակման հիմքով: |

**Ֆինանսավորման սխեմա՝ Ծրագիր 3**

| Միջոցառումներ | Գնահատված ծախսեր | Ֆինանսավորման աղբյուր | | | | Ֆինանսավորման պակաս | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տեղական բյուջե | Պետական, ռեգիոնալ բյուջեներ | Ձեռնարկություններ | Դոնորներ | | |
| **Տարածքի վարձակալություն և պահպանության ծախսեր** | 1,800,000 | | | | 1,800,000 | | Ներառում է տարածքի վարձավճարը և կոմունալ ծախսերը |
| **Մասնագետների վարձատրություն** | 4,080,000 | | | | 4,080,000 | | Նախատեսված է 2 մասնագետի վարձատրության համար |
| **Նյութեր և պարագաներ** | 1,500,000 | | | | 1,500,000 | | Երիտասարդների ժամանցի կազմակերպման համար |
| **Շահառուների տրանսպորտային ծախսեր** | 2,700,000 | | | | 2,700,000 | | Յուրաքանչյուր այցի համար շահառուին կտրամադրվի ճանապարհածախսի փոխհատուցում կամ կկազմակերպվի նրա տեղափոխությունը |
| **Այլ չնախատեսված ծախսեր** | 300,000 | | | | 300,000 | | |
| **Կազմակերպության շահույթ 20%** | 2,712,000 | | | | 2,712,000 | | |

**Մոնիթորինգի պլան՝ Ծրագիր 3**

| **Գործողություններ / նախագծերի գաղափարներ** | **Տևողություն (սկիզբ / ավարտ)** | **Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ** | **Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ** | **Ակնկալվող արդյունքներ երարաժամկետ** |
|---|---|---|---|---|
| Հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար ցերեկային կենտրոնի հիմնում | 2025-2027թթ | Հրապարակումների թիվ - 5 | Մրցույթի փաթեթների թիվ - 1 | Ծահառուների թիվ - 80 |